ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ~~ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ~~ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 97-րդ հոդվածի ~~առաջին մասի երկրորդ կետում «իրավագիտության բակալավրի եւ իրավագիտության մագիստրոսի» բառերը փոխարինել «իրավագիտության բակալավրի» բառերով։~~ 97-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստացել են իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան կամ իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան և մասնագիտական աշխատանքի առնվազն ~~տասնհինգ~~ տասը տարվա փորձառություն, կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.»։

~~***Հոդված 2.*** Օրենսգրքի առաջին մասի չորրորդ կետում «առնվազն երկուսի» բառերը փոխարինել «առնվազն մեկի» բառերով։~~

~~***Հոդված 2.*** Օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«ունեն անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն երկուսի՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն կամ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից մեկի ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն այն պայմանով, որ դատավորի թեկնածուների~~

~~հավակնորդների ցուցակում ընդգրկվելուց հետո 6 ամսյա ժամկետում ձեռք կբերի անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազ մեկ այլ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն .»։~~

Հոդված ~~3~~ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։